ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« —— » _____ 2010թ. N _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 1999թ օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի h.39/12 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
Հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության հիմնադիր, նախկինում Երևանի քաղաքային սովետի նախագահի տեղակալ, Երևանի կոնսերվատորիայի ռեկտոր, Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի տնօրեն, ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ, արվեստագիտության թեկնածու Սամսոն Գասպարյանի ունեցած մեծ ավանդը հայ մշակույթի և գիտության զարգացման ասպարեզում:

Հուշատախտակի տեղադրման համար միջնորդագիր նամակով Երևանի քաղաքապետարան է դիմել ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանը (նամակը կցվում է, առդիր մեկ էջ):

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**